ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/7

ք. Երևան «12» նոյեմբերի 2019թ.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Զ. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Գյուլխասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տվյալների վերլուծության ծառայություններ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5 970 000 (հինգ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով [2]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով

պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ	*<<Անտառային մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ*
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա	*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա*
Հ/հ՝ 1930058282670100 «ԿՈՆՎԵՐՄԲԱՆԿ» ՓԲԸ	*Կենտրոնական գանձապետարան*
ՀՎՀՀ՝ 00156064	*Հ/հ՝ 900018003567*
Հեռախոս՝ +374 60 655 885	*ՀՎՀՀ՝ 01555644*
Զ. Մուրադյան	*Ա. Գյուլխասյան*
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	72311220	Կատարողը պետք է իրականացնի Պատվիրատուի կողմից Վայոց ձորի մարզում ԱՏՀ /աշխարհագրական տեղեկատվական համակարգ/ ու հեռազննման տեխնոլոգիաների կիրառմամբ, դաշտային դիտարկում, ուսումնասիրությունների և լաբորատոր հետազոտությունների արդյունքում վերհանված խաղողի բարձրարժեք գինեմետ սորտերի տնկման համար պիտանի՝ սակայն չմշակվող հողատարածքների վերաբերյալ հավաքագրված տվյալների /աշխարհագրական կոորդինատավորված տվյալներ, վեկտորային շերտեր, անօդաչու թռչող սարքից ստացված տվյալներ, տառաթվային տեղեկատվություն/ վերլուծություն:	դրամ	5 970 000	1	ՀՀ Վայոց ձորի մարզ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 28.12.2019թ

		Վերլուծության համար անհրաժեշտ տվյալները տրամադրվելու են Պատվիրատուի կողմից, իրենից ներկայանցելու են ընդհանուր մինչև 1000 հա մակերեսով հողակտորների վեկտորային շերտեր, յուրաքանչյուր դիսկրետ հողակտորի՝ ընդհանուր մակերեսը, հողային ծածկույթը բնութագրող ցուցանիշները, ոռոգման հնարավոր տարբերակը, հողային զանգվածի մասնագիտացման հավանական ուղղությունը, անօդաչու թռչող սարքից և գետնի մակերևույթից ստացված ֆոտոնկարները: Կատարողը պետք է իրականացնի այդ տվյալների վերլուծությունը համաձայն սույն տեխնիկական բնութագրի: Կատարողի կողմից կազմակերպված աշխատանքային խումբը պետք է կազմված լինի հետևյալ հիմնական մասնագետներից՝ • հողագետ • խաղողի և գինու մասնագետ • աշխարհագետ գեոէկոլոգ • հեռազննման մասնագետ • ԱՏՀ տեխնոլոգիաների մասնագետ: *1□ Նախնական փուլ* **1.1 Տվյալների մշակում, ճշգրտում** Այս փուլում ԱՏՀ և Հեռազննման տեխնոլոգիաներով պետք է վերլուծեն չափորոշիչների տեսանկյունից համապատասաղան նախնական փուլի առվելագույնը 1000 հա տարածք զբաղեցնող հողակտորների					

		վեկտորային շերտերը, որոնք պարունակում են տեղեկատվություն յուրաքանչյուր հողակտորի ընդհանուր մակերեսի վերաբերյալ: Յուրաքանչյուր հողակտորի համար պետք է հաշվարկել միջին բացարձակ բարձրություն, միջին թեքության աստիճան և դիրքադրությունը՝ օգտագործելով 10մ թույլատրելիությամբ ռելիեֆի թվային մոդելը: Համադրելով դաշտային փուլում տեղորոշման սարքի միջոցով նոր ներառված և հանութագրված վեկտորային տվյալները՝ ճշգրտել սահմանները անտառտնտեսության սահմանների նկատմամբ, առանձնացնել և հաշվարկել յուրաքանչյուրի մակերեսը անտառտնտեսության սահմաններում և դրանից դուրս */http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D5%8E%D5%A1%D5%B5%D6%84.pdf/* Պատվիրատուի կողմից տրամադրված նախնական տվյալների համաձայն դաշտային դիտարկումների ընթացքում ուսումնասիրված յուրաքանչյուր հողակտոր ունի պայմանական չկրկնվող ծածկագիր, որով համարակալված է նաև տվալ հողակտորից վերցրած լաբորատոր նմուշը: Սխալմունքներից խուսափելու համար, Կատարողը համաձայն սույն տեխնիկական բնութագրի տվյալների վերլուծություն կատարելիս պետք է անփոփոխ պահի այդ հողակտորների պայմանական ծածկագրերը \համար\, իսկ համադրման և վերլուծությունների արդյունքում նոր առաջացող վեկտորային շերտերին տալ չկշկնվող այլ ծածկագրեր: Այս փուլում մասնագետները պետք է մշակեն անօդաչու թռչող սարքից ստացված նախնական տվյալները, ստանալ տարածքի եռաչափ մոդել,					

		բազմասպեկտրալ օրթոֆոտոհատակագիծ, համադրել վերջինս տվյալ տարածքի հողակտորի վեկտորային շերտի հետ, ճշգրտել սահմանները՝ անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ՝ չափորոշիչների համապատասխանելիության դեպքում ներառելով հարակից տարածքներ և \կամ բացառել պոլիգոնի սահմաներում անհամապատասխան հատվածները \ծառային բուսականության առկայություն, լերկ ժայռ և այլն\: ԱՏՀ և հեռազննման տեխնոլոգիաների կիրառմամբ այս փուլում Կատարողը պետք է յուրաքանչյուր հողակտորի համար կատարի մանրամասն ուսումնասիրություն՝ համեմատելով դաշտային պայմաններում ուսումնասիրված հողակտորը մոտակա չուսումնասիրված հողակտորի հետ: Հիմք ընդունելով աշխարհագրական պայմանները \դիրքադրություն, թեքություն, բացարձակ բարձրություն\, լաբորատոր հետազոտությունների արդյունքները և օգտագործելով Google Eart \pro\ ծրագրային ապահովումը, և \կամ բարձր լուծաչափի արբանյակային պատկեր\ առկայության դեպքում՝ բացառել ծրագրի չափորոշիչներին չհամապատասխանող հողակտորները \ծառաթփային բուսականության առկայություն, լերկ ժայռեր և այլն\: Այս փուլի վերջնական արդյունքը պետք է հանդիսանան պիտանի հողակտորների վերջնական վեկտորային շերտերը, չկրկնվող պայմանական ծածկագրերով, յուրաքանչյուր հողակտորի դիրքադրության, միջին թեքության աստիճանի, միջին					

		բացարձակ բարձրության տվյալների տեղեկատվական դաշտերով, որպես օրինակային ընտրված տարածքի բազմասպեկտրալ օրթոֆոտոհատակագիծը և եռաչափ մոդելը \ներկայացնել վիդեո \անիմացիոն\ տարբերակով\: **1.2 կլիմայական ցուցանիշների հաշվարկ** Այս փուլում կատարողը, պատվիրատուի կողմից տրված տվյալների հիման վրա պետք է ԱՏՀ և հեռազննման տեխնոլոգիաների, ագրոկլիմայական հաշվարկի մեթոդոլոգիայով տրամադրի յուրաքանչյուր հողակտորի համար հետևյալ կլիմայական ցուցանիշները՝ • ակտիվ ջերմաստիճանների տարեկան գումարը,°, • ակտիվ ջերմաստիճանների գումարը ապրիլ – սեպտեմբեր ամիսներին,°, • ակտիվ ջերմաստիճանների գումարը սեպտեմբերին,°, • ակտիվ ջերմաստիճանների գումարը հոկտեմբերին, °, • հուլիսի միջին ջերմաստիճանը, C°, • 30 C° և ավել ջերմաստճանով օրերի թիվը ապրիլ – սեպտեմբեր ամիսներին, • 30 C° և ավել ջերմաստճանով օրերի թիվը սեպտեմբերին, • բացարձակ նվազագույն ջերմաստիճանների միջինը, C°, • տեղումների քանակը ապրիլ – սեպտեմբեր					

		ամիսներին, մմ, • տեղումների քանակը սեպտեմբերին, մմ, • տեղումների քանակը հոկտեմբերին, մմ, ԱՏՀ մասնագետը պետք է այս տվյալները գրանցի վեկտորային շերտի համապատասխան տեղեկատվական դաշտում: *2□ Հողակտորներիի հնարավոր մասնագիտացման ուղղությունները* Հիմնվելով պատվիրատուի կողմից տրամադրված և նախորդ փուլում ստացած տվյալների վրա տալ հողակտորի մասնագիտացման հավանական ուղղության բացվածքը՝ • մշակության համար առավել օպտիմալ գինեմետ սորտային կազմը /առնվազն՝ տարածված տեղական կամ տեղածին սորտերի համար/, • ագրո- և էնոտեխնոլոգիական հնարավոր մոտեցումները /կարճ բնութագիր՝ նվազագույնը 20 բառ/, • զարգացման ընդհանուր տեսլականը /կարճ բնութագիր՝ նվազագույնը 20 բառ/ Կախված հումուսային հորիզոնի հզորությունից, քարքարոտության աստիճանից, pH-ից, հումուսով և շարժուն սննդատարրերով ապահովածությունից կհիմնավորվի հողերի հանքային և հատկապես օրգանական պարարտանյութերով պարարտացման, ինչպես նաև հողաշերտի, խորացման, փխրեցման և քարհավաքի անհրաժեշտությունը: Կախված մայրատեսակից կտրվի այգիների հիմնման եղանակները՝ տվյալ տարածաշրջանին բնորոշ					

		եղանակով կամ վազի տնկման տեղի համապատասխան խորությամբ լոկալ բարելավումով (համապատասխան հողախառնուրդի օգտագործում), ոռոգման եղանակները՝ կաթիլային կամ շարքերով: Մշակության համար առավել օպտիմալ սորտային կազմի տեղեկատվությունը պետք է գրանցված լինի յուրաքանչյուր հողակտորի վեկտորային շերտի համապատասխան տեղեկատվական դաշտում: *3□ Հնարավոր ներդրողների համար կարևոր տեղեկատվության մանրամասնում* Հիմնվելով պատվիրատուի կողմից տրամադրված և նախորդ փուլում ստացած տվյալների վրա տալ հողակտորների՝ հնարավոր ներդրումներին վերաբերվող առկա տեղեկատվության մանրամասնում՝ • հեռավորությունը ջրամատակարարման հնարավոր աղբյուրից /մինչև 1 կմ, 1-5կմ, 5-10 կմ/, աղբյուրի տեսակը, • հեռավորությունը միջհամայնքահին ճանապարհներից /մինչև 1 կմ, 1-5 կմ, 5-10 կմ/, • հեռավորությունը մոտակա 10 կվտ հզորությամբ էլեկտրոսնուցման լարերից /մինչև 1 կ, 1-5կմ, 5-10 կմ/, • հեռավորությունը մոտակա պատմամշակութային հանրաճանաճ կոթողներից /մինչև 1 կմ, 1-5կմ, 5-10 կմ/: • տեղեկատվություն գտնվելու վայրի վերաբերյալ՝ համայնքի \գյուղ, քաղաք\ և \կամ հարակից համայնքի անվանումը:					

		Տեղեկատվությունը լրացնել նաև վեկտորային շերտի տեղեկատվական դաշտերում համապատասխան անվանմամբ: *4□ Ամփոփիչ փուլ* Այս փուլում կատարողը, ամփոփելով պատվիրատուի կողմից տրամադրված նախնական, ինչպես նաև նախորդ փուլերում վերլուծությունների արդյունքները, պետք է ձևավորի յուրաքանչյուր հողակտորի վերջնական անձնագիրը, որը պետք է պարունակի ներքոհիշյալ տեղեկատվությունը՝ • պայմանական համար \չկրկնվող, որով պետք է նույնականացվի հողակտորը բոլոր նկարագրություններում\ • տեքստային բնութագիր \թղթային և էլեկտրոնային տարբերակ\ • քարտեզ սխեմա \թղթային տպված\ • վեկտորային շերտ \.shp և ,kmz ընդլայնումներով, WGS UTM Zone 1938N կոորդինատային համակարգ\ Հողակտորի տեքստային բնութագիրը և վեկտորային շերտի տեղեկատվական դաշտերը պետք է պարունակեն հողակտորի վերաբերյալ հետևյալ տղեկատվությունը՝ • Պայմանական չկրկնվող ծածկագիր \համար\ • բարձրությունը ծովի մակարդակից, մ, • մակերեսը, հա,					

		• կողմնադրությունը, • թեքության աստիճանը, °, • տարեկան ակտիվ ջերմաստիճանների գումարը,°, • ակտիվ ջերմաստիճանների գումարը ապրիլ – սեպտեմբեր ամիսներին,°, • ակտիվ ջերմաստիճանների գումարը սեպտեմբերին,°, • ակտիվ ջերմաստիճանների գումարը հոկտեմբերին, °, • հուլիսի միջին ջերմաստիճանը, C°, • 30 C° և ավել ջերմաստճանով օրերի թիվը ապրիլ – սեպտեմբեր ամիսներին, • 30 C° և ավել ջերմաստճանով օրերի թիվը սեպտեմբերին, • բացարձակ նվազագույն ջերմաստիճանների միջինը, C°, • տեղումների քանակը ապրիլ – սեպտեմբեր ամիսներին, մմ, • տեղումների քանակը սեպտեմբերին, մմ, • տեղումների քանակը հոկտեմբերին, մմ, • հողատիպը և ենթատիպը, /ուսումնասիրված հողային ընդհանուր զանգվածների առնվազն 80%-ի համար/, • հումուսային հորիզոնների հզորությունը, սմ /ուսումնասիրված հողային ընդհանուր զանգվածների առնվազն 1-4%-ի համար/, • հումուսային շերտում /A+B/, հումուսի ընդհանուր պարունակությունը, %, /ուսումնասիրված հողային ընդհանուր					

		զանգվածների առնվազն 1-3%-ի համար/, • մատչելի սննդատարերի /NPK/, Ca, Mg պարունակությունը, մգ/100 գ հողի հաշվով, pH, $CaCO_3$, %,/ուսումնասիրված հողային ընդհանուր զանգվածների առնվազն 1-2% համար/, • հողի մեխանիկական կազմը և քարքարոտությունը: • հեռավորությունը ջրամատակարարման հնարավոր աղբյուրից /մինչև 1 կմ, 1-5կմ, 5-10 կմ/, աղբյուրի տեսակը, • հեռավորությունը միջհամայնքահին ճանապարհներից /մինչև 1 կմ, 1-5կմ, 5-10 կմ/, • հեռավորությունը մոտակա 10 կվտ հզարությամբ էլեկտրոսնուցման լարերից /մինչև 1 կ, 1-5կմ, 5-10 կմ/, • հեռավորությունը մոտակա պատմամշակութային հանրաճանաճ կոթողներից /մինչև 1 կմ, 1-5կմ, 5-10 կմ/: • Մշակության համար առավել օպտիմալ սորտային կազմը /առնվազն տարածված տեղական կամ տեղաձին սորտերի համար/, • տեղեկատվություն պատկանելիության կամ սեփականության ձևի մասին /ոչ պաշտոնական ձևաչափ/ Տեքստային կարճ բնութագիր • ագրո- և էնոտեխնոլոգիական հնարավոր մոտեցումների վերաբերյալ /առնվազն 20 բառ/ • զարգացման ընդհանուր տեսլականի վերաբերյալ /առնվազն 20 բառ/ Ծրագրի ամբողջ արդյունքները կատարողը					

		պարտավոր է հանձնել պատվիրատուին DVD և կոշտ /flesh/ կրիչներով, ինչպես նաև ինտերնետային թղթապանակի ծառայությունների եղանակով /DropBox, Google Drive, Microsoft OneDrive /:					

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
Հ/հ՝ 1930058282670100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00156064
Հեռախոս՝ +374 60 655 885

Հ. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Անտառային մոնիթորինգի կենտրոն>>
ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
Կենտրոնական գանձապետարան
Հ/հ՝ 900018003567
ՀՎՀՀ՝ 01555644

Ա. Գյուլխասյան

Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72311220	տվյալների վերլուծության ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	4 179 000	5 970 000	5 970 000

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
Հ/հ՝ 1930058282670100 «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00156064
Հեռախոս՝ +374 60 655 885

Ղ. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

<<Անտառային մոնիթորինգի կենտրոն>>
ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 39ա
Կենտրոնական գանձապետարան
Հ/հ՝ 900018003567
ՀՎՀՀ՝ 01555644

Ա. Գյուլխասյան

Կ.Տ

Հավելված 3
« » նոյեմբերի 2019թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » նոյեմբերի 2019թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-19/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն